

թուականը ԺԹ. դարուն կը վերադրէ(*):

Կովկասի մէջ անցեալ դարուն տակաւին կը գտնուէին բաւական թիւով աշուղներ, որոնց ազդեցութիւնը աչքի կը դարնէ տեղւոյն արուեստագիտական հնարողութեան մէջ: Անոնցմէ իւրր առաջնակարգ աշուղ պէտք է յիշել նուագայարգար Նիկողոս Տիգրանեանը, որ մի քանի հայկական, քրտական, պարսկական և տաճկական հագներգութիւններ ինչպէս նաև ժողովրդական պարեր գաշնակի համար փոխադրեց: Բայց F. Maclerի կարծիքը սա է թէ այս երգերուն երբ եւրոպական ներդաշնակութիւն տրուի, անոնց արեւելեան եղանակը կը կորսուի և կամ մեծապէս կը փոխուի:

Հայկական եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան զարգացման աշխատող երաժշտներէն իւրր առաջնակարգ պէտք է յիշել Մակար Եկմախանը և ԿարաՄուրզան: Առաջինը Րիմսքի-Քորասքովին աշակերտը եղաւ Բեղրոկրատի մէջ, և հայ պատարագը քառածայնի վերածեց — պահելով անոր մէջ յարմայն diatonique եղանակը պատարագի երգին(**): Երկրորդը եկեղեցական երաժշտութենէ դատ, կը զբաղէր նոյնպէս աշխարհիկ ժողովրդական երաժշտութեամբ, զոր կը կատարէր իր սեպհական խումբով: Զկարողացաւ դժբաղդաբար զգուշանալ եւրոպական ազդեցութենէն, այս պատճառաւ անոր ամենամեծ արժանիքն է գուցէ հայկական ժողովրդային երաժշտութեան բրօքականութիւնը աւելի հայրենիքի մէջ, քան թէ ուսումնասիրութեանց համար(***)։ Բայց հայկական ազգային երաժշտութեան վերահաստատման և վերածննդի համար՝ օտար ազդեցութիւններէ զտումին, առաքումին և կորուստէ փրկութեան, և ժողովրդական երաժշտութեան աւարտումին և արեւելեան եղանակներու համաձայն հրատարակութեան ազգասիրական, արուեստագիտական և ուսումնագիտական բուն մեծ և ահագին գործը կատարեց արտասովոր երաժշտագէտը, մեծ գիտունը և ջերմ ազգասէրը—Կոմիտաս Վարդապետ: Լըվով

ՊՐՈՆԻՍԼՈՎԱ ՔԷՕԲԵՐԻԻԼԵԱՆ

ՁՈՒՂԱՅԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Հայկական հին պատարագը անոյց եկաւ ամենու՝ Ս. Թորոս պատմական մատեն մէջ, Ս. Թեոդորոսի օգին օրը. ոչ միայն օրագրէն Բարդէն Սարկաւազ յաշուած էր արուեստին զիտակցութեամբը սովորեցնել զայն ժառանգաւորներուն, այլ այն պատճառաւ նաեւ որ կարծես զաղափարական աւերնութիւն մը կար եղանակին հայեցի վաղեմականութեան և հինաւորաց գրչութեան արուեստին միջեւ փոքրիկ տարբար որմնածածկող բազմազան ձեւազոյններուն, որոնք շարի շար դասաւորուած էին կողմ կողմի կանգնած ապակափեղի մեծ դարաններուն մէջ: Արուեստին ինքնասպառնալիցութեան մէջ էն յանկուցիչն է արդարեւ սգիկ նոյնութիւնը արայայութեան բազմաձեւութեան մէջ: Երբ աղբիւրը նոյն է, անկէ բխած զգացումները, ի՞նչ ձեւերով ալ պատկերացունք՝ զիրար յիշեցնող զիմէր կ'ունենան անպատճառ իրենց արայայութեան մէջ: Զուգայի Պատարագը, զոր Հնդկաստան պատճառաւորող Զուգայեցի Բահմաններէն լսելով ձայնագրած եւ ժեղ սպառութեամբ հրատարակած է Օր. Էմի Արգար, Կալկաթայի այդ պատարագում էր գիտուն Հայունին, առաջին պատկերացումը բերեալ պիտի լիջ մը խոր մեղէ արեւմեան հաշակով բաւական խանգարում մը այժմեան պատարագի եղանակներուն վարժողներուն: Եւ սակայն, ամենք որ փոքր ի շատէ եւ նոյն իսկ բնագրական հասկացողութիւն ունին ազգային եկեղեցական մեր հին եղանակներուն, պիտի սիրեն զայն անվրէպ: Անոր զնացր՝ սահմանէ և կարծես կարկաչող առաւանակին, որ լուսնեակ զիւրի մոգէն անցած ասէն իր մէջ կը ցոլացնէ աստեղերուն կայծկլսութիւնը եւ երկու ամբողջ վրայ քերել զեփիւռէ մը շարժող բուլիւրէն ու փոքրիկ տակերէ: Առաջին զայնութիւնը զոր կուսայ ան Բեդի, քրտութեան անվրէպ լուսնին մեծումն է, քրտութեան լրջմիտ խոհանքի, երբ կ'ուզեն, որ զգալ եւ խորհիլ կուսայ միանգամայն. կոցողութիւնը հոգեկան ներքին զոյգ այն վիճակներուն՝ արեւց ծնունդն է ինքնին աղօթքը: Հիմա կը հասկնամ մասնաւոր թէ զեղարուեստի ամենէն բարձր ներութիւններուն կիրք մեր Հնդկահայ քրտանին ի՞նչպէս, հոն, Կալկաթայ, հազարէքայ Ս. Յովնանէսի կամարներուն ներքեւ, ներամտփոխ հոգիացման սարսուռներով կ'ողելուրէր, երբ պատմական օրիորդին մարգար խումբը կ'երգէր այդ պատարագը: Հին արտաւանդ այն եղանակն է ան, որ կ'երգուէր Վաղարշապատի մէջ, զեւ Աւսարակեցի կարողիկոսութեան օրերուն, եւ, զոր ազգատէ Հայրապետին ձեռնադրանքէն ինքնագրեան թաղեալ եպիսկոպոսի միջոցաւ Զուգա էր տարուած, անկէ, յետոյ, իր ձեռնասուններուն հետ տարելու համար Հնդկափարս: Անոր մէջ օտար իւր կայ ազգային զգացման զոգսիկ բազմութիւն, զոր հայ սիր մը ամենէն անկէ կ'ընայ զգալ: Ինչու չէ որ մեր մեծ երաժիշտ-փիլիսոփայ, Կոմիտաս վրդ. զնմանաւ էր զայն, եւ անոր խորին վրայ յորիմած՝ իր պատարագը:

(*) Ալիշան Ղ. Յուլիսի հայրենեաց հայոց. Վենետիկ 1869: (**) Հրատարակութիւն. Breitkopf Hartel Leipzig 1896: (***) Հայկական ժողովրդական երաժշտութիւնները ճրագարարած են նոյնպէս Գ. Միրզաբեկ, Բ. Մելիքեան, Լ. Եղիազարեան, Մ. Պոյաճեան և այլն: (Բ. Macler 1. c.):